



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

## Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)  
[www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

## SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

27th March 2022

Bulletin 14/2022

### Fifth Sunday of Great Lent—The Judge

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՍԷ ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 3:1-4:9**  
**ՃԾՄԱՐԻՏ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ**

Վերջապէս, եղբայրներս, ուրախացէ՛ք Տէրոջմով: Արդարեւ նոյն բաները գրել ձեզի՝ ձանձրոյթ չէ ինծի, բայց ապահովութիւն է ձեզի:

Զգուշացէ՛ք շուններն, զգուշացէ՛ք չար գործաւորներն, զգուշացէ՛ք թլփատութենէն. որովհետեւ թլփատութիւնը մե՛նք ենք, որ կը պաշտենք Աստուած Հոգիով եւ կը պարծենանք Քրիստոս Յիսուսով, ու վստահութիւն չունինք մարմնի վրայ. թէւ ե՛ս ալ ունենալու էի նոյն վստահութիւնը մարմնի վրայ: Եթէ ուրիշ մէկը կը կարծէ թէ վստահութիւն ունի մարմնի վրայ, ա՛յ աւելի ե՛ս՝ ութերորդ օրը թլփատուած, Իսրայէլի ցեղէն, Բենիամինի տոհմէն, Եբրայեցի մը՝ Եբրայեցիներէն, Օրէնքին համեմատ՝ Փարիսեցի, նախանձախնդրութեան համեմատ՝ եկեղեցին կը հալածէի, Օրէնքէն եղած արդարութեան համեմատ՝ անմեղադրելի էի:

Բայց ինչ որ շահ էր ինծի, վնաս համարեցի զայն՝ Քրիստոսի համար: Ու նոյնիսկ բոլոր բաներն ալ վնաս կը համարեմ՝ իմ Տէրոջս Քրիստոս Յիսուսի գիտութեան գերազանցութեան համար: Բոլոր բաներէն զրկուեցայ անոր համար, եւ ադր կը համարեմ զանոնք, որպէսզի շահիմ Քրիստոսը ու գտնուիմ իր մէջ, ունենալով ո՛չ թէ իմ արդարութիւնս՝ որ Օրէնքէն է, հապա ա՛յն՝ որ Քրիստոսի հաւատքին միջոցով է, արդարութիւնը՝ որ Աստուծմէ՛ է՝ հաւատքով. որպէսզի ճանչնամ զինք եւ իր յարութեան գօրութիւնը, ու հաղորդակից ըլլամ իր չարչարանքներուն՝ կերպարանակից դառնալով իր մահուան, որպէսզի կարենամ հասնիլ՝ մեռելներուն յարութեան:

### ՎԱԶՔ ԴԷՊԻ ՆՊԱՏԱԿԱԿԷՏ

Ո՛չ թէ ես արդէն ստացած եմ մրցանակը, կամ արդէն կատարեալ եղած եմ. հապա հետամուտ եմ բռնելու զայն, որուն համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէ: Եղբայրներ, ես չեմ սեպեր թէ բռնած եմ: Հապա կ'ընեմ սա՛ մէկ բանը. մոռցած եմ ետեւի եղածները, եւ կը դիմեմ առջեւի եղածներուն: Կը հետապնդեմ նպատակակետը՝ Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին համար: Ուրեմն մենք բոլորս՝ որ կատարեալ ենք՝ մտածե՛նք այսպէս. իսկ եթէ տարբեր կերպով մտածէք բանի մը մասին, Աստուած զայն ալ պիտի յայտնէ ձեզի: Սակայն ի՛նչ աստիճանի որ հասած ենք՝ ընթանա՛նք նոյն կանոնին համաձայն, մտածե՛նք նոյնպէս:

Եղբայրներ, բոլորդ միասին նմանեցէ՛ք ինծի, եւ ուշադիր եղէք անոնց՝ որ կ'ընթանան ա՛յնպէս՝ ինչպէս մենք, որ ունիք իբր տիպար: Որովհետեւ շատեր կ'ընթանան, որոնց մասին յաճախ կ'ըսէի ձեզի եւ հիմա կ'ըսեմ՝ նոյնիսկ լալով, այսինքն՝ Քրիստոսի խաչին թշնամիները. անոնց վախճանը կորուստ է, անոնց աստուածը՝ իրենց որովայնն է, ու անոնց փառքը՝ իրենց ամօթն է: Անոնք կը մտածեն միայն երկրային բաներու մասին. իսկ մեր քաղաքացիութիւնը երկինքն է, ուրկէ կը սպասենք Փրկիչին՝ Տէր Յիսուս Քրիստոսի, որ պիտի կերպարանափոխէ մեր նուաստացած մարմինը՝ կերպարանակից ըլլալու իր փառաւոր մարմնին, այն ներգործութեան համեմատ՝ որ կարող է նաեւ ամէն ինչ հպատակեցնել իրեն:

### ՅՈՐԴՈՐԱՆՔՆԵՐ

Հետեւաբար, սիրելի ու կարօտալի եղբայրներս, իմ ուրախութիւնս ու պսակս, ա՛յսպէս հաստատուն կեցէք Տէրոջմով, սիրելիներս:

### Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

## 2: A short interpretation of the Scripture reading

Կ'աղաչեմ Եւոդիայի ու Կ'աղաչեմ Սինտիքի, որ ունենան միեւնոյն մտածումը Տէրոջմով: Եւ կը խնդրեմ քեզմէ՛ ալ, իմ հարազատ լծակիցս, օգնէ՛ ասոնց՝ որ աւետարանին համար մարտնչեցան ինծի հետ, նաեւ Կդեմէսի եւ միւս գործակիցներու հետ, որոնց անունները կեանքի գիրքին մէջ են:

Ամէ՛ն աստե՛ն ուրախացէք Տէրոջմով. դա՛րձեալ կ'ըսեմ, ուրախացէ՛ք: Ձեր ազնուութիւնը թող յայտնի ըլլայ բոլոր մարդոց. Տէրը մօտ է: Մի՛ մտահոգուիք որեւէ բանի համար. հապա ամէն բանի մէջ՝ աղօթքով ու աղերսանքով, շնորհակալութեամբ միասին, գիտցուցէ՛ք ձեր խնդրանքները Աստուծոյ. եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ գերիվեր է, պիտի պահպանէ ձեր սիրտերն ու մտածումները՝ Յիսուս Քրիստոսով:

Վերջապէս, եղբայրներ, ինչ որ՝ ճշմարիտ է, ինչ որ՝ պատկառելի, ինչ որ՝ արդար, ինչ որ՝ անկեղծ, ինչ որ՝ սիրալիր, ինչ որ՝ բարի համբաւով, ինչ որ առաքինութեամբ եւ ինչ որ գովելի է, ասո՛նց մասին մտածեցէ՛ք: Ինչ որ սորվեցաք, ընդունեցիք, լսեցիք ու տեսաք իմ վրաս՝ զանո՛նք ըրէք, եւ խաղաղութեան Աստուածը պիտի ըլլայ ձեզի հետ:

### **The Epistle of St Paul to the Philippians 3:1-4:9;**

#### **RIGHTEOUSNESS THROUGH FAITH**

Finally, my brethren, rejoice in the Lord. To write the same things to you, to me indeed is not irksome, but for you it is safe.

Beware of the dogs, beware of the evil workers, beware of the concision: for we are the circumcision, who worship by the Spirit of God, and glory in Christ Jesus, and have no confidence in the flesh: though I myself might have confidence even in the flesh: if any other man thinketh to have confidence in the flesh, I yet more: circumcised the eighth day, of the stock of Israel, of the tribe of Benjamin, a Hebrew of Hebrews; as touching the law, a Pharisee; as touching zeal, persecuting the church; as touching the righteousness which is in the law, found blameless.

#### **KNOWING CHRIST IS ABOVE ALL**

Howbeit what things were gain to me, these have I counted loss for Christ. Yea verily, and I count all things to be loss for the excellency of the knowledge of Christ Jesus my Lord: for whom I suffered the loss of all things, and do count them but refuse, that I may gain Christ, and be found in him, not having a righteousness of mine own, even that which is of the law, but that which is through faith in Christ, the righteousness which is from God by faith: that I may know him, and the power of his resurrection, and the fellowship of his sufferings, becoming conformed unto his death; if by any means I may attain unto the resurrection from the dead.

#### **PRESS ON TOWARD THE GOAL**

Not that I have already obtained, or am already made perfect: but I press on, if so be that I may lay hold on that for which also I was laid hold on by Christ Jesus. Brethren, I could not myself yet to have laid hold: but one thing I do, forgetting the things which are behind, and stretching forward to the things which are before, I press on toward the goal unto the prize of the high calling of God in Christ Jesus. Let us therefore, as many as are perfect, be thus minded: and if in anything ye are otherwise minded, this also shall God reveal unto you: only, whereunto we have attained, by that same rule let us walk.

#### **CITIZENSHIP IN HEAVEN**

Brethren, be ye imitators together of me, and mark them that so walk even as ye have us for an example. For many walk, of whom I told you often, and now tell you even weeping, that they are the enemies of the cross of Christ: whose end is perdition, whose god is the belly, and whose glory is in their shame, who mind earthly things. For our citizenship is in heaven; whence also we wait for a Saviour, the Lord Jesus Christ: who shall fashion anew the body of our humiliation, that it may be conformed to the body of his glory, according to the working whereby he is able even to subject all things unto himself.

#### **STAND FIRM IN THE LORD**

Wherefore, my brethren beloved and longed for, my joy and crown, so stand fast in the Lord, my beloved.

I exhort Euodia, and I exhort Syntyche, to be of the same mind in the Lord. Yea, I beseech thee also, true yokefellow, help these women, for they laboured with me in the gospel, with Clement also, and the rest of my fellow-workers, whose names are in the book of life.

Rejoice in the Lord always: again I will say, Rejoice. Let your forbearance be known unto all men. The Lord is at hand. In nothing be anxious; but in everything by prayer and supplication with thanksgiving let your requests be made known unto God. And the peace of God, which passed all understanding, shall guard your hearts and your thoughts in Christ Jesus.

#### **THINK ON THESE THINGS**

Finally, brethren, whatsoever things are true, whatsoever things are honourable, whatsoever things are just, whatsoever things are pure, whatsoever things are lovely, whatsoever things are of good report; if there be any virtue, and if there be any praise, think on these things. The things which ye both learned and received and heard and saw in me, these things do: and the God of peace shall be with you.

## ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍ 17:20-18:14

ՌԱԳԱԲԻՌՈՒԹԵԱՆ ԳԱՆՈՒՄՏԸ (Մատթ. 24.23-28,37-41)

Երբ Փարիսեցիները հարցուցին իրեն. «Աստուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի գայ», պատասխանեց անոնց. «Աստուծոյ թագաւորութիւնը չի գար դուրսէն երեւցած բաներով: Եւ պիտի չըսեն. “Ահա՛ հոս է”, կամ. “Ահա՛ հոն”». որովհետեւ ահա՛ Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսն է»:


Աշակերտներուն ալ ըսաւ. «Օրե՛ր պիտի գան, երբ դուք պիտի ցանկաք տեսնել մարդու Որդիին օրերէն մէկը, բայց պիտի չտեսնէք: Ու եթէ ըսեն ձեզի. “Ահա՛ հոս է”, կամ. “Ահա՛ հոն”, մի՛ երթաք եւ հետամուտ մի՛ ըլլաք: Որովհետեւ ինչպէս փայլակը՝ երկինքին տակ մէկ ծայրէն փայլատակելով՝ կը լուսաւորէ մինչեւ երկինքին տակ միւս ծայրը, նոյնպէս պիտի ըլլայ մարդու Որդին՝ իր գալուստին օրը: Սակայն պէտք է որ ինք նախ շատ չարչարանքներ կրէ ու մերժուի այս սերունդէն: Ինչպէս պատահեցաւ Նոյի օրերուն, այնպէս պիտի ըլլայ մարդու Որդիին օրերուն ալ: Կ’ուտէին, կը խմէին, կ’ամուսնանային, ամուսնութեան կու տային, մինչեւ այն օրը՝ երբ Նոյ մտաւ տապանը, ու ջրհեղեղը եկաւ եւ կորսնցուց բոլորը: Նմանապէս՝ ինչպէս Դովտի օրերուն ալ պատահեցաւ՝ կ’ուտէին, կը խմէին, կը գնէին, կը ծախէին, կը տնկէին, կը կառուցանէին: Բայց այն օրը՝ երբ Դովտ դուրս ելաւ Սոդոմէն, երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց եւ կորսնցուց բոլորը: Նոյնպէս պիտի ըլլայ այն օրը՝ երբ մարդու Որդին յայտնուի: Այդ օրը, ան որ տանիքին վրայ է եւ իր կարասիները՝ տան մէջ, թող չիջնէ՝ զանոնք առնելու. նմանապէս ան որ արտին մէջ է՝ թող չվերադառնայ: Յիշեցէ՛ք Դովտի կինը: Ո՛վ որ ջանայ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ պիտի ապրեցնէ զայն: Կը յայտարարեմ ձեզի. “Այդ գիշերը եթէ երկու անձեր մէկ մահիճի մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը մնայ. եթէ երկու կիներ միասին աղան, մէկը պիտի առնուի եւ միւսը մնայ. եթէ երկու մարդիկ արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը մնայ”»: Անոնք պատասխանեցին անոր. «Տէ՛ր, ո՞ր պիտի ըլլայ այս բանը»: Ան ալ ըսաւ անոնց. «Ո՛ր մարմին կայ, հոն պիտի հաւաքուին արծիւները»:

ՈՐԲԵՒԱՐԻՆ ԵՒ ԴԱՏԱԲԻՐԻՆ ԱՌԱԿԸ

Առակ մըն ալ ըսաւ անոնց, որ գիտնան թէ պէտք է ամէ՛ն ատեն աղօթել՝ առանց ձանձրանալու: Ըսաւ. «Բաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ Աստուծմէ չէր վախնար ու մարդ չէր յարգեր: Նոյն քաղաքին մէջ այրի մըն ալ կար, որ կու գար անոր եւ կ’ըսէր. “Պաշտպանէ՛ իմ իրաւունքս՝ ոտխիս դէմ”»: Ան ժամանակ մը չէր ուզեր անոր մտիկ ընել. բայց յետոյ ըսաւ ինքնիրեն. “Թէպէտ Աստուծմէ չեմ վախնար ու մարդ չեմ յարգեր, գո՛նէ պաշտպանեմ այս այրիին իրաւունքը՝ զիս անհաւատացնելուն համար, որպէսզի չգայ ամէն ատեն թախանձէ ինձի”»: Եւ Տէրը ըսաւ. «Լսեցէ՛ք ինչ կ’ըսէ անիրաւ դատաւորը: Հապա Աստուած պիտի չպաշտպանէ՞ իր ընտրեալներուն իրաւունքը, որոնք կը գոչեն իրեն ցերեկ ու գիշեր, թէեւ համբերատար ըլլայ անոնց հանդէպ: Կը յայտարարեմ ձեզի թէ շուտով պիտի պաշտպանէ անոնց իրաւունքը. բայց երբ մարդու Որդին գայ, արդէօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՐՏԱԲԻՐԻՆ ԱՌԱԿԸ

Սա՛ առակն ալ ըսաւ ոմանց, որոնք իրենք իրենց վրայ կը վստահէին թէ արդար են, եւ կ’անարգէին ուրիշները. «Երկու մարդ տաճարը բարձրացաւ աղօթելու, մէկը՝ Փարիսեցի, ու միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին կայնած էր եւ սա՛պէս կ’աղօթէր ինքնիրեն. “Ո՛վ Աստուած, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց պէս չեմ, յաւիշտակող, անիրաւ, շնացող, կամ ալ այս մաքսաւորին պէս. հապա շարաթը երկու անգամ ծոմ կը պահեմ, եւ ամբողջ եկամուտիս տասանորդը կու տամ”»: Իսկ մաքսաւորը հեռուն կայնած էր, ու չէր ուզեր աչքն ալ բարձրացնել երկինք, հապա՛ ծեծելով իր կուրծքը՝ կ’ըսէր. “Աստուած, ներէ՛ ինձի՛ մեղաւորիս”: Կը յայտարարեմ ձեզի թէ ասիկա այն միւսէն ավելի արդարացած իջաւ իր տունը. որովհետեւ ո՛վ որ կը բարձրացնէ ինքզինք՝ պիտի խոնարհի, իսկ ո՛վ որ կը խոնարհեցնէ ինքզինք՝ պիտի բարձրանայ»:



The Unjust Judge

## The Holy Gospel of Jesus Christ according to Luke 17:20-18:14

### THE COMING OF THE KINGDOM OF GOD

Once, on being asked by the Pharisees when the kingdom of God would come, Jesus replied, “The coming of the kingdom of God is not something that can be observed, nor will people say, ‘Here it is,’ or ‘There it is,’ because the kingdom of God is in your midst.”<sup>ε</sup>

Then he said to his disciples, “The time is coming when you will long to see one of the days of the Son of Man, but you will not see it. People will tell you, ‘There he is!’ or ‘Here he is!’ Do not go running off after them. For the Son of Man in his day<sup>δ</sup> will be like the lightning, which flashes and lights up the sky from one end to the other. But first he must suffer many things and be rejected by this generation.

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.



“Just as it was in the days of Noah, so also will it be in the days of the Son of Man. People were eating, drinking, marrying and being given in marriage up to the day Noah entered the ark. Then the flood came and destroyed them all.

“It was the same in the days of Lot. People were eating and drinking, buying and selling, planting and building. But the day Lot left Sodom, fire and sulphur rained down from heaven and destroyed them all.

“It will be just like this on the day the Son of Man is revealed. On that day no one who is on the housetop, with possessions inside, should go down to get them. Likewise, no one in the field should go back for anything. Remember Lot’s wife! Whoever tries to keep their life will lose it, and whoever loses their life will preserve it. I tell you, on that night two people will be in one bed; one will be taken and the other left. Two women will be grinding grain together; one will be taken and the other left.”

“Where, Lord?” they asked.

He replied, “Where there is a dead body, there the vultures will gather.”

### The Parable of the Persistent Widow

Then Jesus told his disciples a parable to show them that they should always pray and not give up. He said: “In a certain town there was a judge who neither feared God nor cared what people thought. And there was a widow in that town who kept coming to him with the plea, ‘Grant me justice against my adversary.’

“For some time he refused. But finally he said to himself, ‘Even though I don’t fear God or care what people think, yet because this widow keeps bothering me, I will see that she gets justice, so that she won’t eventually come and attack me!’ ”

And the Lord said, “Listen to what the unjust judge says. And will not God bring about justice for his chosen ones, who cry out to him day and night? Will he keep putting them off? I tell you, he will see that they get justice, and quickly. However, when the Son of Man comes, will he find faith on the earth?”



Jesus teaching the twelve

## Սուրբ քառասուն մանկանց հիշատակության օր

4-րդ դարի սկզբին նահատակված 40 վկաները Փոքր Հայքի տարբեր քաղաքներից էին և զինվորական ծառայության մեջ էին Սեբաստիա քաղաքի կայսերական գնդում: Երբ Լիկիանոս կայսեր հրամանով Կեսարիայի դուքս Լյուսիսսը հարցաքննում է՝ բանակում քրիստոնյա զինվորներ հայտնաբերելու նպատակով, նրանցից 40-ը, հավատարիմ իրենց հավատին, անվեհեր պատասխաններով դատավորների գայրույթն են



առաջացնում և բանտարկվում: Չմեռային մի ցուրտ գիշեր նրանց նետում են Սեբաստիա քաղաքի մոտ գտնվող լիճը: 40-ից միայն մեկը չի կարողանում տանջանքներին դիմանալ: Դուքս ելնելով սառցակալած ջրից, նա փորձում է փրկություն գտնել լճափին կառուցված տանը, սակայն կնքելով մահկանացուն, գրկվում է թե՛ երկրային, թե՛ երկնային կյանքից:

Լուսադեմին մյուս բոլոր նահատակները երևում են լուսե պսակներով զարդարված: Պահապան զինվորներից մեկը, տեսնելով այդ, լցվում է Քրիստոսի հավատով և նետվելով լիճը, պսակակից դառնում նրանց: Աստվածային հրաշքով ձմեռային սառնամանիքին դիմակայած վկաներն առավոտյան նահատակվում են: Նրանց նշխարներն ամփոփվում են Սեբաստիայում, որտեղ եւ հետագայում կառուցվում է «Քառասուն մանկունք» 40 զմբեթանի տաճարը, որ կանգուն է եղել մինչև Լենկթեմուրի արշավանքը: 40 մանկանց պատմությունը հորդորում է կյանքի բոլոր դժվարությունների մեջ անգամ հավատարիմ մնալ Քրիստոսի հավատին, հաղթահարել դյուրահան գայթակղությունները՝ երկնային պսակին արժանանալու համար:

## Commemoration of the forty Holy Martyrs

The Forty Holy Martyrs martyred in approximately 320 AD were Christians from various towns and cities of Lesser Armenia. They served as soldiers in the royal regiment of Sebastia. Upon the decree of Roman Emperor Licinius, interrogations were organized by Lucius, Duke of Caesarea, to reveal the Christian soldiers. Forty of the soldiers remain steadfast in their faith, defy the judges by their brave answers, and are imprisoned. One cold winter night the soldiers are thrown into a lake near Sebastia, to freeze them to death. Only one of the forty soldiers, being unable to endure the torments, comes out of the water, and tries to find salvation in a bathhouse built on the bank. The lone soldier dies and becomes deprived of both earthly and heavenly life.

At dawn, halos are seen encircling the heads of the soldiers. One of the guards charged with the execution of the forty, witnessing the holy phenomenon accepts Christ and throws himself into the lake to be martyred along with the others. In the morning it becomes apparent that through a divine miracle, the forty soldiers have been saved from freezing. This infuriates their captors who execute them and thus, they become martyrs. The martyrs' remains are buried in Sebastia, where subsequently a Forty-domed Cathedral is built. The Cathedral of Sebastia stood for nearly one thousand years until the invasion of Tamerlane and the Mongols at the end of the 14th Century. The name of the "Forty Martyrs Cathedral" has survived to this

### Դատավորի կիրակի

Մեծ Պահքի հինգերորդ կիրակին կոչվում է Դատավորի: Այդ օրվա խորհուրդը բացատրում է այրի կնոջ եւ դատավորի մասին առակը (Ղուկ. 18: 1-5): Ըստ առակի՝ մի այրի կին, անընդհատ խնդրում է Աստծուց չերկնչող եւ մարդկանցից չվախեցող դատավորին՝ իր դատն անելու: Դատավորը կնոջից ազատվելու համար ստիպված բավարարում է նրա պահանջը: Այս առակը պատմելուց հետո Քրիստոս հավաստիացնում է բոլորին, որ եթե անարդար դատավորն այրի կնոջ դատը տեսավ, ապա Աստված առավել ևս կկատարի բոլոր նրանց խնդրանքները, ովքեր միշտ աղոթքով խնդրում են:

Առակը հորդորում է ամեն ժամ աղոթել, որը խորհրդանշում է հոգու մշտական մղումն առ Աստված, բայց միևնույն ժամանակ իրական աղոթքի կոչ է: Առակը պատմելուց հետո Քրիստոս ասում է. «Իսկ երբ մարդու Որդին գա, արդյո՞ք երկրի վրա հավատ կգտնի» (Ղուկ. 18: 8): Առակում Հիսուսը տալիս է երկրորդ գալստյան գաղափարը: Տիրոջ բառերի մեջ տխրություն ու թախիծ է զգացվում: Փրկչի համար ցավալի է, որ շատ մարդիկ կարող են ենթարկվել Ահեղ դատաստանի՝ արքայության ժառանգորդներ լինելու փոխարեն:

### Sunday of the Judge

The fifth Sunday of Great Lent is called the Sunday of the Judge. The message of the day teaches us with the parable of the widow and the Judge. This parable comes to us in the Gospel of St. Luke (Luke 18:1-8). The parable tells the story of a widow who repeatedly came to a judge, who neither feared God nor respected man, and pled for her rights. For a long period of time the judge refused to act, but in the end, he fulfilled her request, to put an end to her continuous appeals. Otherwise, he feared that she would continue to return indefinitely.

After telling this parable, the Lord assures everyone, that if a man as corrupt and unfair as this judge decided in favour of the widow, then God surely would judge in favour of his own people and grant the requests of all those who submit to Him through prayer. This parable exhorts us to always and continually pray, as prayer symbolizes the soul's eternal striving and thirst for God. The parable also contains an appeal from Christ. After telling the parable, Christ says: "But will the Son of Man find faith on earth when He comes?" In His words, Jesus gives a reference to the Second Coming, and sadness and anguish are felt in the Lord's remark. It is truly painful for the Saviour that many people may be subject to just, yet cruel judgment, instead of becoming the inheritors of the Kingdom of God.



Coffee break  
with  
Fr Nshan

St Yeghiche Armenian Church Parish Council is proud to announce the launch of  
“an informal conversation over coffee with Fr Nshan“

on general topics and our understanding of Armenian Apostolic Church teachings.

Please join Fr Nshan via zoom every other Thursday evenings starting from 3rd March 2022.

If you missed our meeting last Thursday the next one is on 31st March 2022@7:00 pm.

**ALL ARE WELCOME**

Link how to join the Meeting via zoom

<https://us02web.zoom.us/j/89978610581?pwd=WDIwOUJuRFhBVVIMcVRzU3BrNlozZz09>

Meeting ID: 899 7861 0581

Passcode: 824479

## Dear St Yeghiche Armenian Church Parishioners

Kindly find herewith our new QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account.

Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions.

Thank you

St Yeghiche Armenian Church Parish Council



## Thank you

St Yeghiche Armenian Church Council would like to extend its gratitude to all members of our community who attended and supported the Michink luncheon. HG Bishop Hovakim together with HG Bishop Datev (Primate of the Armenian Church in Romania) blessed the table and all who shared its bounty. HG Bishop Datev gave a very moving speech on the occasion. A special thank you to our Ladies Guild for their hard work in preparing delightful and tasty offer of Armenian Lent dishes for the occasion.

### Ծանոթութիւն.

Մեծ Պահքի ամբողջ ընթացքում եկեղեցու խորանները փակ են՝ ի նշան դրախտից մարդկանց արտաքսման: Բացառութիւն են կազմում **ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԱԻԵՏՄԱՆ** (Ապրիլի 7) եւ **ՍՈՒՐԲ ԳԸ. ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ՍՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊՆ** (Պահոց Զ. Կիրակիին նախորդող շաբաթ օրը), երբ պատարագին համար բացւում են խորանները եւ պատարագի աւարտից անմիջապէս յետոյ կրկին փակւում:

## PRAYER SERVICES DURING THE GREAT LENT

Monday, 28th February, is the beginning of Great Lent, a period which lasts 40 days. The Armenian Church defines the period of Great Lent as a time of abstinence and repentance for the faithful. It is a profound and unique period of spiritual experience.

**Vigils on Friday evenings:** There are vigils every Friday evening at St. Yeghiche Armenian Church (on 4th, 18th March and **1st** April) and St Sarkis Church (on 11th, 25th March and 8th April) starting from 4th March. Service will begin at 6:30 pm. The faithful are welcome to join and are encouraged to wearing of face masks when attending church to help the venerable.

## Join St. Yeghiche Choir

Join us in the celebration of the Divine Liturgy, Badarak, at St. Yeghiche Armenian Church in Cranley Gardens. Deepen your faith and discover your talent as a choir member by learning the Armenian hymns and rituals. No prior experience or knowledge is needed. The choirmaster, Aris Nadirian, will help you build your confidence and proficiency in singing the liturgy.

We look forward to welcoming everyone to our choir. Your presence will expand and enrich our choir.

For further details, please contact: [services@styeghiche.org.uk](mailto:services@styeghiche.org.uk)





### 3: This week's message from our Priest in Charge

#### Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցումից.

Յանուին Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն.

**«Աստ՛ ձեզ. էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա»** («Ասում եմ ձեզ. սա՛ իջաւ իր տունը արդարացած, ոչ թէ միւսը») (Ղուկ. 18. 14):

Աստծոյ զաւակ դարձած սիրելիներ,

Վերի մի քանի բառերով Փրկիչը սահմանել է հոգեւոր ջանքի նպատակը, ըստ այդմ՝ աղօթքի, ողորմութեան, պահքի, հոգեւոր ճիգ ու աշխատանքի նպատակը: Ամէն անգամ, երբ պիտի կը մտածէք Մեծ Պահքի մասին, երբ որեւէ մէկը ձեզ կը հարցնի պահքի ու ծոմի եւ աղօթական հսկումի մասին, միշտ յիշէք Քրիստոսի այս խօսքերը:

Հոգեւոր ընթացքը նպատակ ունի, այլապէս անօգուտ տանջանք կը դառնայ: Մեր ապստամբած միտքը, մարմինը պահքի միջոցով խոնարհեցնելու նպատակը Աստծուն մեր մէջ բերելն է, միակ Արդարով արդարանալը: Աստծոյ Որդին երկնքից երկիր խոնարհուեց՝ խաչելութեամբ մարդուն փրկելով մեղքի եւ մահուան դատապարտութիւնից: Սա աստուածային միջամտութիւն է դատապարտուած մարդկութեան նկատմամբ: Ոչ մի ուժ մարդուն չի կարող փրկել կեանքին սպառնացող մահուան թոյնից, որ մահն է, ոչ մի մարդկային ջանք, ծանօթութիւն, դրամ ու զօրութիւն չի կարող մարդուն դէպի մահուան բանտ տանելուց փրկել: Հնարաւոր չէ ոչինչ անել առանց Քրիստոսի....

Ինչո՞ւ է կարելոյ պահքի համար մեզ հարց տալը՝ «ինչո՞ւ, ինչի՞ համար եմ պահք պահում, աղօթում, ողորմութիւն տալիս»: Գաղտնիք չէ, որ շատերը աղօթում կամ ծոմ ու պահք են պահում այլ նպատակով՝ մարմնական առողջութեան, կամքի զօրացման, իրենց աշխարհային եւ մարմնական որեւէ նպատակի կատարման եւ բազմաթիւ նման պատճառներով: Սակայն այսպիսիները նմանում են Աստծոյ հարսանեկան հրաւերը մերժողներին, որոնք իրենց նորապսակ լինելու, նոր գնում արտի կամ փորձարկման տարուող եզների պատճառն առաւել կարելոյ են համարում Տիրոջ հետ հանդիպումից:

Մեծ Պահքի չորրորդ կիրակիի ավետարանական ընթերցումները յարատեւ ու խոնարհ աղօթքի մասին են: Բայց ե՛ւ անիրաւ դատաւորին անընդհատ դիմող կնոջ օրինակում, ե՛ւ «մեղայ» ասող մաքսաւորի օրինակում Աստծուց ստանալիք արդարութեան մասին է խօսւում: Աղօթքի արդիւնքում հոգին խաղաղում է, ներսում ուրախ է եւ պայծառ, երբ աղօթողն Աստծոյ հետ իր հաշտուելու, արդարացած լինելու զգացումն ունի: Նոյնը պահեցողութեան, ողորմութեան դէպքերում է: Աւելին, Տիրոջ Մարմնի եւ Արեան սուրբ հաղորդութեան նպատակն է Քրիստոսի բերած ներմանն արժանանալն է, Փրկչով արդարանալը:

Հոգեւոր ցանկացած քայլ, արարք, ընթացք ունենալու համար մեր ներսում Աստծոյ սէրը պիտի ունենանք եւ դա անենք խոնարհաբար, առանց մեր կամ ուրիշի աչքին մեծ երեւալու, առանց հպարտութեան: Այլապէս դրանք կարող են մեզ ոչ միայն հոգեւոր օգուտ չը տալ, այլեւ վնասել:

Այո, կայ սիսալ աղօթք, պահք կամ ողորմութիւն, երբ մեր արարքով մեր փառքն ենք փնտրում եւ ոչ Աստծուն: Պօղոս առաքեալն էլ յիշեցնում է, որ եթէ արժանաւոր կերպով չենք մօտենում Քրիստոսի Մարմնին ու Արեանը, ոչ թէ մեր արդարացումը, այլ դատապարտութիւնն ենք ընդունում: Ուրեմն, զգոյշ լինենք՝ միշտ նախապէս մեր ներսում պատասխանելով, թէ ինչո՞ւ, յանուն ո՞ւմ ենք անում այս կամ այն հոգեւոր քայլը: Գաղտնիքը Աստծուն ամբողջ սրտով սիրելու եւ կամաւորապէս մեր անձը խոնարհեցնելու մէջ է:

**«Ասում եմ ձեզ, սա՛ իջաւ իր տունը արդարացած, ոչ թէ միւսը. որովհետեւ, ով որ բարձրացնում է իր անձը, կը խոնարհուի, եւ ով որ խոնարհեցնում է իր անձը, կը բարձրացուի»** (Ղուկ. 18. 14):

**Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

#### 4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Doris Khanzadian for the soul of her Brother, the late **LORIS KHANZADIAN** on the 40<sup>th</sup> day memorial, also for Her Parents the late **HASMIG** and **VANO KHANZADIAN**, also for all the old and new deceased members of the **KHANZADIAN** Family.

By Helen Khachikian and Robert Istepanian and their Families for the soul of their Aunt, who was also a loving Great Aunt the late **ALVART KHACHIKIAN** on the 3-7<sup>th</sup> day memorial, who passed away on 20<sup>th</sup> March 2022 in Almelo Holland. Also for all the old and new deceased members of the **KHACHIKIAN** and **ISTEPANIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէի, հիւանդի այցելութեան, Սր Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Բահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

**HOKEHANKIST AND IN LIEU OF FLOWERS** Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

#### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

#### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully*

#### ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: **“St Yeghiche Armenian Church”**.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

**St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.**

